

Նախապես ծրագրեցէք եթէ COVID-19-է ծանր հիւանդութեան աւելի մեծ վտանգի տակ էք:



Plan ahead if you are at higher risk of severe illness from COVID-19

COVID-19-է ծանր հիւանդութեան աւելի մեծ վտանգի տակ էք

Եթէ COVID-19-է ծանր հիւանդութեան աւելի մեծ վտանգի տակ էք, հիմա խօսեցէք ձեր բժիշկին հետ, նախքան հիւանդանալը, իմանալու համար թէ ինչ պէտք է ընէք եթէ հարբուխի կամ տենդախառն հարբուխի ախտանշաններ ունենաք:

Ծանր հիւանդութեան աւելի մեծ վտանգի ենթակայ եղողներու մէջ են՝

- 70 տարեկան եւ աւելի մեծ տարիքի մարդիկ
- 50 տարեկան եւ աւելի մեծ տարիքի մարդիկ որոնք լրացուցիչ հիւանդագին գործօններ ունին, ներառեալ գիրութիւն, շաքարախտ, սրտանոթային հիւանդութիւն, մնայուն թոքի հիւանդութիւն (ներառեալ մեղմ կամ ծանր թասախտ (ասթմա) որ կը պահանջէ ներշնչելի սղերոյտներ), ջղաբանական հիւանդութիւն, ծանր երկարատեւ լեարդի կամ երիկամունքի հիւանդութիւն, գործօն քաղցկեղ կամ անոնք որոնք չեն ստացած յանձնարարուած պատուաստումները:
- 30 տարեկան եւ աւելի մեծ, Ապոլիճիճի եւ Թորրըս Նեղուցի Կղզիներու բնակիչներ որոնք ունին վերը նշուած յաւելեալ վտանգի գործօնները
- Որեւէ տարիքի մարդիկ որոնք ունին չափաւոր կամ ծանր ախտամերժողական անբաւարարութիւն
- նշանակալի կամ բարդ հաշմանդամութիւն ունեցող մարդիկ
- յղի կիներ
- բարդ երկարատեւ հիւանդութիւններ ունեցող երեխաներ

Եթէ հեռաւոր շրջանի մը մէջ կը բնակիք եւ առողջապահական խնամքի մատչելիութեան նուազ կարելիութիւններ ունիք, կամ տարեցներու կամ հաշմանդամներու խնամքի հաստատութեան մը բնակիչ էք, քննարկեցէք ձեր վտանգը ձեր բժիշկին հետ քանի որ դուք եւս կրնաք իրաւասու ըլլալ հակաժահրային դարմանումի կամ յաւելեալ օժանդակ խնամքի:

Հարցուցէք ձեր բժիշկին թէ ինչ COVID-19 քննութիւն պէտք է կատարէք, եթէ յանձնարարեն հակաժահրային դեղեր եւ թէ ինչպէս ստանալ հակաժահրայիններ եթէ COVID-19 դրական արդիւնք ստանաք:

Հակաժահրային դեղերը կրնան օգնել ձեզի արագօրէն լաւանալու, եւ անոնք աւելի լաւ կ'ազդեն եթէ անմիջապէս առնուին:

Եթէ ունիք առողջապահութեան վերաբերեալ որեւէ մտահոգութիւններ, եւ կարիք ունիք լեզուական աջակցութեան, հեռաձայնեցէք TIS 131 450 եւ խնդրեցէք National Coronavirus Helpline (Ազգային Քորոնավայրըս Օգնութեան Գիծ) 1800 020 080 հեռախօսահամարով:

Յալեալ տեղեկութեան համար այցելեցէք www.nsw.gov.au